



# Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԱՄՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ



### ԲԱՐԵԿԵՆՈՒԱՆ ԱՌԱՋԱԽՈՐԱՅ ՊԱՇԵՐ

6 ՓԵՏՐՈՒԲԱՐ 2022

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**  
**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐԲԷՆ**  
 (61.10-62.9)

**Ե**րուսաղէմը Տիրոջ պարգեւած ուրախութեամբ պիտի խայտայ եւ Աստուծով պիտի ցնծայ, որովհետեւ Աստուած փրկութեան զգեստ հագցուց անոր եւ ուրախութեան պատմուճանով պատեց զայն. փեսայութեան պսակը դրաւ անոր գլխուն եւ հարսնութեան զարդերով պճնեց զայն:

Ինչպէս հողին մէջ նետուած սերմերը կը ծլին, կամ ինչպէս պարտէզին տունկերը կը ծաղկին, այնպէս ալ Տէր Աստուծոյ արդարութիւնը եւ ուրախութիւնը պիտի ծագին Երուսաղէմի մէջ եւ բոլոր ժողովուրդները ականատես պիտի ըլլան: Ուստի պիտի չլռեմ, Սիոնի սիրոյն, անդադար պիտի աշխատիմ Երուսաղէմի համար, մինչեւ որ անոր արդարութիւնը ծագի լոյսի պէս եւ անոր փրկութիւնը փայլատակէ ջահի մը պէս:

Այն ատեն հեթանոսները պիտի տեսնեն արդարութիւնդ, ո՛վ Երուսաղէմ, բոլոր թագաւորները պիտի տեսնեն քու փառքդ եւ քեզ պիտի կանչեն նոր անունով մը որ Տէրը ինք պիտի տայ քեզի:

Տիրոջ ձեռքին մէջ վայելուչ պսակ մը պիտի ըլլաս. արքայական թագ պիտի ըլլաս Աստուծոյդ ձեռքին մէջ: Այլեւս բնաւ “Լքուած կին” պիտի չկոչուիս, ո՛չ ալ երկիրդ “Աւերակ” պիտի անուանուի. այլ ես քեզ “Նախասիրածս” պիտի կոչեմ, իսկ երկիրդ՝ “Բնակուած Շէն”, որովհետեւ Տէրը պիտի

հաւանի քեզի եւ երկիրդ բնակութեամբ պիտի խոնուի: Ինչպէս երիտասարդ մը եւ կոյս մը նոր ընտանիք կը կազմեն, այնպէս ալ զաւակներդ քեզի հետ նոր ընտանիք պիտի կազմեն. եւ ինչպէս փեսան հարսով կ’ուրախանայ, այնպէս ալ Աստուածդ քեզմով պիտի ուրախանայ: Ո՛վ Երուսաղէմ, պարիսպներուդ վրայ պահապաններ կարգեցի որոնք անդադար գիշեր-ցերեկ Տիրոջ պիտի աղաղակեն: Մի՛ լռէք, ո՛վ աղօթողներ, հանգիստ մի՛ տաք Աստուծոյ, մինչեւ Երուսաղէմը վերականգնէ եւ զայն երկրի պարծանքը դարձնէ:

Տէրը հետեւեալ երդումը ըրաւ, որ պիտի կատարէ իր փառքով, իր զօրաւոր բազուկով. «Ա՛լ բնաւ ցորենդ թշնամիներուդ պիտի չտամ որպէս կերակուր, օտարներու զաւակները պիտի չխմեն գինիդ որուն համար դուն վաստակեցար. այլ դո՛ւն պիտի հնձես ու դուն վայելես քու բերքդ եւ փառք տաս Տիրոջ, այգեկուծք պիտի ընես ու դուն խմես գինիդ սրբարանիս սրահներուն մէջ»:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ**  
**ՏԻՄՈԹԷՈՍԻ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԻ ՆԱՄԱԿԷՆ**  
 (2.15-26)

**Ա**շխատէ որ Աստուծոյ աչքին ըլլաս այնպիսի մշակ մը որ իր գործերուն համար ամէնալիք բան մը չունի, որպէս մէկը՝ որ ուղիղ կերպով կ’ուսուցանէ Աստուծոյ ճշմարիտ պատգամը:

Հեռո՛ւ կեցիր հաւատքի ճշմարտութիւնները խեղաթիւրոյ պարապ վիճաբանութիւններէ, որոնք հետզհետէ մարդիկը Աստուծմէ հեռացնելու կը ծառայեն միայն: Այդպիսի խօսքերու ձգած թոյնը քաղցկեղի պէս կը կրծէ մարդս: Այդպիսի խեղաթիւրոյ

վիճասէրներ էին Հիմենոս եւ Ֆիլետոս, որոնք ճշմարտութենէն շեղեցան եւ շատերու հաւատքը քանդեցին, ըսելով թէ մեռելներու յարութիւնը արդէն տեղի ունեցած է: Բայց Աստուծոյ դրած հաստատուն հիմը կանգուն կը մնայ: Անոր վրայ գրուած է. «Տէրը կը նանչնայ անոնք որոնք իրն են», եւ, «Ով որ Տիրոջ կը պատկանի՝ թող հեռու մնայ անիրաւ գործերէ»:

Մեծ տունի մը մէջ միայն ոսկիէ եւ արծաթէ անօթներ չեն ըլլար, այլ նաեւ փայտէ ու կաւէ անօթներ: Յստակ է թէ առաջինները թանկագին են, իսկ միւսները անարժէք: Արդ, ով որ ինքզինք մաքրէ նման մեղքերէ, կը դառնայ Աստուծոյ համար թանկագին անօթ մը, մաքուր եւ պատրաստ՝ ամէն տեսակի բարի ծառայութիւն մատուցանելու:

Փախի՛ր երիտասարդական ցանկութիւններէն: Արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան ու սրբութեան հետամուտ եղիր, անոնց պէս՝ որոնք մաքուր սիրտով կ'աղօթեն Աստուծոյ: Յիմար եւ անօգուտ վէճերէն հրաժարէ, գիտնալով որ անոնցմէ կռիւներ կը ծագին: Աստուծոյ ծառան պէտք չէ կռուի, այլ պէտք է հեզ ըլլայ բոլորին հանդէպ, կարող ըլլայ աւետարանը սորվեցնելու, ներողամիտ ըլլայ որպէսզի քաղցրութեամբ խրատէ հակառակողները, որովհետեւ Աստուած միշտ ալ առիթ կու տայ որ անոնք դառնան իրենց սխալէն եւ ճշմարտութիւնը ճանչնան, եւ զգաստանալով դուրս գան սատանային որոգայթներէն, որոնց մէջ բռնուած՝ անոր կամքը կը կատարեն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՅՈՂՎԱՆՆՈՒ  
(6.15-21)

**Յ**իսուս երբ գիտցաւ թէ պիտի գան բռնութեամբ զինք թագաւոր ընելու, դարձեալ լեռը ելաւ, առանձինն:

Երեկոյեան, Յիսուսի աշակերտները ծովեզերք իջան եւ նաւակ մտնելով սկսան երթալ ծովուն դիմացի կողմը, դէպի Կափառնառւմ: Երբ մթնցաւ, տակաւին Յիսուս իրենց եկած չէր: Ծովը զօրաւոր հովէն կ'ալեկոծէր:

Աշակերտները հազիւ հինգ կամ վեց քիլոմետր նաւարկած էին, երբ տեսան Յիսուսը, որ ծովուն վրայէն քալելով կը մօտենար նաւակին: Բոլորը սարսափեցան: Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ, մի՛ վախնաք»: Անոնք կ'ուզէին զինք նաւակին մէջ առնել, բայց արդէն նաւակը հասաւ այն տեղը, ուր կ'երթային:

Եկեղեցւոյս նստարաններուն վրայ  
Ձեր հանգուցեալ սիրելիներուն  
անունով ցուցանակ տեղադրելու  
համար, կրնաք կապուիլ  
եկեղեցւոյ գրասենեակ՝  
514 331 5445 x202:

ԱՅԵԼԵՅԷ՛Ք ԵԿԵՂԵՑՈՅՍ  
ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՁԸ  
ԵՒ ՁԵՐ ՀԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ յԱՅՏԵՅԷՔ  
(like).  
[www.facebook.com/SourpHagopChurchMontreal](http://www.facebook.com/SourpHagopChurchMontreal)

ԱՅԵԼԵՅԷ՛Ք ՆԱԵԻ  
Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ  
ԵԿԵՂԵՑՈՅ ԿԱՅԷՁԸ՝  
[www.sourphagop.net](http://www.sourphagop.net)